ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 35

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը:

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին :
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին :
(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավարի 2020թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկականի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի աշխատակիցների 2020 թվականի քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին :

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

7.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Հովհաննես Արամի Գասպարյանին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին :

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքի ղեկավար՝ Սամվել Մխոյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝	----------	----------	----------
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝	----------	----------	----------
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 36

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝համաձայն հավելվածի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝			
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝			
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝			
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 36 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի սեփականության

ամենամյա գույքագրման

Հ/հ	Գույքի անվանումը	Տարեթիվը	Քանակը	Հաշվեկշռային արժեքը (ՀՀ դրամ)	Տեխնիկական վիճակը
1.	Հացի պահեստ	1987	2	269650	վթարային
2.	Հորթանոց	1987	-	97530	վթարային
3.	Մշակույթի տուն	1970	-	645960	վթարային
4.	Նավես	1982	-	4800	վթարային
5.	Բիլիարդ	-	-	-	օգտագործման համար ոչ պիտանի
6.	Գրասեղան	-	2	1200	բավարար
7.	Գեղարվեստական գիրք	-	5692	120000	բավարար
8.	Աթոռ (փափուկ)	-	5	2000	բավարար
9.	Ընթերցասեղան	-	3	5000	բավարար
10.	Գրասեղան	-	5	21147	բավարար
11.	Գրապահարան	-	1	11535	բավարար
12.	Մետաղյա պահարան	-	6	75439	բավարար
13.	Բազմոց	-	1	16918	բավարար
14.	Փոքր պահարան	-	1	11150	բավարար
15.	Կախիչ	-	1	6844	բավարար
16.	Հեռախոս «Ալտայ»	-	1	34989	անսարք
17.	Սիլոսի հոր	-	1	66595	վթարային

18.	Կոլտնտեսության գրասենյակ, ավտոտնակ	1988	12		վթարային
19.	Տրակտոր թրթուրավոր ԴԶ-42	1988		104200	անսարք
20.	Տրակտոր ԴՏ-75	1987	-	42218	անսարք
21.	Տրակտոր Տ8-70	1990	-	228700	անսարք
22.	Տրակտոր ՄՏԶ-50	1985	-	60751	անսարք
23.	Տրակտոր ՄՏԶ- 82	1988	-	152493	անսարք
24.	Տրակտոր Տ -25	1988	-	53292	անսարք
25.	Տրակտոր ՄՏԶ-80	1989	-	189328	անսարք
26.	Տրակտոր ՄՏԶ-82	1989	-	189328	անսարք
27.	Կոմբայն հաց. ՍԿ-5	1983	-	22916	անսարք
28.	Կոմբայն հաց. ՍԿ-5	1986	-	24377	անսարք
29.	Կոմբայն « Նիվա»	1989	-	146495	անսարք
30.	Կոմբայն « Նիվա»	1990	-	167104	անսարք
31.	Խոտհնձիչ Ե -281	1989	-	297603	անսարք
32.	Գութան	1987	-	11920	անսարք
33.	Գութան	1985	-	8459	անսարք
34.	Գութան	1989	-	27684	անսարք
35.	Կուլտիվատոր	1987	-	23070	անսարք
36.	Կուլտիվատոր	1988	-	30760	անսարք
37.	Կուլտիվատոր	1989	-	34913	անսարք
38.	Շարքացան ԿՈՄ	1989	-	26915	անսարք
39.	Շարքացան ՍԶՈՒ 3.6	1991	-	14226	անսարք
40.	Շարքացան ՍՕ 4.2	1991	-	14380	անսարք
41.	Պրես պոդբորշիկ	1987	-	8997	անսարք
42.	Պրես պոդբորշիկ	1990	-	27607	անսարք
43.	Ժատկա ԺՈԲ-427	1991	-	8228	անսարք
44.	Բրդի հակավորող	1986	-	7075	անսարք
45.	Հաց մաքրող ՍՄ- 4	1987	-	8459	անսարք

46.	Գազ 53- Ա	1978	-	25223	անսարք
47.	Գազ 52-04	1979	-	17841	անսարք
48.	ՄՍԶ 45021	1983	-	34912	անսարք
49.	Գազ 52-04	1980	-	17918	անսարք
50.	Գազ 53	1982	-	20609	անսարք
51.	Գազ 52	1985	-	17995	անսարք
52.	ՍԱԶ-3507	1985	-	34912	անսարք
53.	Գազ 52	1986	-	18840	անսարք
54.	Գազ 53	1987	-	38835	անսարք
55.	Գազ 53	1988	-	59982	անսարք
56.	Ցիստերն ԱՍՄՊ 37	1989	-	142188	սարքին
57.	Ավտոբուս ԿԱՎԶ	1985	-	46370	անսարք
58.	Ռաֆ	1989	-	182000	անսարք
59.	Ուազ	1989	-	72978	անսարք
60.	Վազ- 21213«Նիվա»	1997	1	1800000	անսարք
61.	Տրակտորի կցորդ	1987	-	11150	անսարք
62.	Տրակտորի կցորդ	1988	-	31529	անսարք
63.	Տրակտորի կցորդ	1987	-	39219	անսարք
64.	Տրակտորի կցորդ	1989	-	53830	անսարք
65.	Մանկապարտեզի նոր շենք	1992	-	նվիրատվություն	անավարտ
66.	Մանկապարտեզի շենք քարային	1990	-	նվիրատվություն	հիմնանորոգված
67.	Համակարգիչ	2002	1	նվիրատվություն	սարքին
68.	Տպիչ	2002	1	նվիրատվություն	անսարք
69.	Հեռախոս ԶՏԵ	2007	1	18000	սարքին
70.	Հակակարկտային կայան «Զենիթ-100»	2007	2	նվիրատվություն	բավարար
71.	Բազկաթոռ	2008	1	30000	բավարար
72.	Սեղան	2008	1	60000	բավարար
73.	Աթոռ	2008	6	32000	բավարար

74.	Պահարան	2008	1	78000	բավարար
75.	Համակարգիչ	2010	1	317000	սարքին
76.	Տպիչ	2010	1	48000	սարքին
77.	Ցուցատախտակ	2010	1	36000	լավ
78.	Համակարգիչ	2011	1	290000	սարքին
79.	Տպիչ	2011	1	82000	սարքին
80.	Սեղան	2011	1	150000	լավ
81.	Աթոռ	2011	6	72000	լավ
82.	Համակարգիչ	2012	1	330000	գերազանց
83.	Ճանապարհային տեսախցիկ	2014	2	440000	գերազանց
84.	Ավտոմեքենա KIA	2014	1	3960000	լավ
85.	Հակակարկտային կայան «Զենիթ-100»	2014	1	4100000	գերազանց
86.	Բազկաթոռ	2014	1	75000	գերազանց
87.	Մահճակալ մեկհարկանի	2014	50	նվիրատվություն	գերազանց
88.	Խաղալիքի պահարան	2014	4	նվիրատվություն	գերազանց
89.	Զգեստապահարան 5 տեղանոց	2014	6	նվիրատվություն	գերազանց
90.	Մանկական սեղան	2014	14	նվիրատվություն	գերազանց
91.	Մանկական աթոռ	2014	50	նվիրատվություն	գերազանց
92.	Տնօրենի սեղան	2014	1	նվիրատվություն	գերազանց
93.	Գրասեղան	2014	2	նվիրատվություն	գերազանց
94.	Աթոռ	2014	5	նվիրատվություն	գերազանց
95.	Գրապահարան	2014	1	նվիրատվություն	գերազանց
96.	Խոհանոցային կահույք	2014	1	260000	գերազանց
97.	Լվացքի մեքենա	2014	1	130833	գերազանց
98.	Սառնարան	2014	1	180833	գերազանց
99.	Մսաղաց	2014	1	38416	գերազանց

100.	Թեյնիկ	2014	2	40333	գերազանց
101.	Հարիչ	2014	1	19750	գերազանց
102.	Արդուկ	2014	2	37166	գերազանց
103.	Արդուկի սեղան	2014	2	32500	գերազանց
104.	Փոշեկուլ	2014	2	52666	գերազանց
105.	Կշեռք	2014	1	16250	գերազանց
106.	Խոհանոցային պարագա	2014	3	11333	գերազանց
107.	Թավա	2014	2	29583	գերազանց
108.	Խոհանոցային դանակների հավաքածու	2014	1	14333	գերազանց
109.	Խոհանոցային հավաքածու	2014	1	19750	գերազանց
110.	Կաթսա մեծ	2014	1	30000	գերազանց
111.	Կաթսա միջին	2014	1	25000	գերազանց
112.	Կաթսա փոքր	2014	2	22000	գերազանց
113.	Ափսե մեծ	2014	54	21600	գերազանց
114.	Ափսե միջին	2014	54	16200	գերազանց
115.	Բաժակ թեյի	2014	9 կոմպլետկ	49500	գերազանց
116.	Բաժակ ջրի	2014	50	27500	գերազանց
117.	Գդալ մեծ	2014	9 կոմպլեկտ	36000	գերազանց
118.	Գդալ փոքր	2014	9 կոմպլեկտ	13500	գերազանց
119.	Պատառաքաղ	2014	9 կոմպլեկտ	25200	գերազանց
120.	Դանակ փոքր	2014	9 կոմպլեկտ	25200	գերազանց
121.	Սննդի կտրատելու տախտակ	2014	4	8000	գերազանց
122.	Փլավքամիկ	2014	2	2400	գերազանց
123.	Սխտորճզմիչ	2014	1	2000	գերազանց

124.	Շերեփ մեծ	2014	1	2000	գերազանց
125.	Դույլ պլաստմասե	2014	4	10000	գերազանց
126.	Դույլ էմալապատ	2014	2	18000	գերազանց
127.	Սկուտեղ	2014	4	9400	գերազանց
128.	Սննդային գոգաթի	2014	2	1000	գերազանց
129.	Սննդի տարա մեծ	2014	1	3500	գերազանց
130.	Սննդի տարաներ միջին	2014	4	6000	գերազանց
131.	Սննդի տարաներ փոքր	2014	4	5200	գերազանց
132.	Հացման	2014	12	6000	գերազանց
133.	Դանակ-գդալ-պատառաքաների պլաստմասե ամաններ	2014	2	2200	գերազանց
134.	Սննդային համեմունքների տարաների կոմպլեկտ	2014	1	9000	գերազանց
135.	Ձրի տարա /50լ/	2014	1	3600	գերազանց
136.	Պլաստմասե տաշտ	2014	2	3400	գերազանց
137.	Սնունդ լվանալու տարա	2014	2	3000	գերազանց
138.	Սպասք լվանալու տարա	2014	2	4000	գերազանց
139.	Սպասքի չորանոց	2014	4	11200	գերազանց
140.	Խոհանոցային սրբիչ սպասքի	2014	10	5500	գերազանց
141.	Խոհանոցային սրբիչ խավոտ	2014	6	2400	գերազանց
142.	Խոհանոցային լաթեր	2014	10	2500	գերազանց
143.	Գոգնոց և բռնիչ	2014	1	950	գերազանց
144.	Խոհանոցային ձեռնոց և սրբիչ	2014	1	950	գերազանց
145.	Ավել գոգաթիակի հետ, պլաստմասե	2014	2	6000	գերազանց
146.	Աղբաման պլաստմասե	2014	4	16000	գերազանց
147.	Լվացքի ծղիկներ	2014	2	3600	գերազանց
148.	Սրբիչների չորանոց	2014	1	12000	գերազանց

149.	Խոհանոցի լվացարանի սիֆոն	2014	2	4200	գերազանց
150.	Սրբիչների կախիչ փոքր	2014	6	2400	գերազանց
151.	Սրբիչների կախիչ մեծ	2014	9	9000	գերազանց
152.	Կենցաղային էլեկտրասարքավորումների հոսանքի փոխարկիչներ	2014	3	2400	գերազանց
153.	Գորգ ռետինե	2014	1	4400	գերազանց
154.	Գորգ փոքր	2014	2	4600	գերազանց
155.	Վերմակ ամառային	2015	50	նվիրատվություն	գերազանց
156.	Վերմակ ձմեռային	2015	50	նվիրատվություն	գերազանց
157.	Բարձ մանկական	2015	50	նվիրատվություն	գերազանց
158.	Սավան մանկական	2015	100	նվիրատվություն	գերազանց
159.	Ծրար մանկական	2015	100	նվիրատվություն	գերազանց
160.	Բարձի երես	2015	100	նվիրատվություն	գերազանց
161.	Մահճակալի ծածկոց	2015	50	նվիրատվություն	գերազանց
162.	Արևային տաք ջրամատակարարման համակարգ	2017	1	2075000	գերազանց
163.	Ֆոտովոլտային էլեկտրական (5.57 ԿՎՏ հզորությամբ)	2017	1	2849774	գերազանց
164.	Գորգ	2018	2	120000	գերազանց
165.	Զրուցարան	2018	1	նվիրատվություն	գերազանց
166.	Աղբարկղ	2018	31	868000	լավ
167.	Նստարան	2019	6	300000	գերազանց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 37-Ն

«16» դեկտեմբերի 2019թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ,10-րդ 11-րդ,12-րդ , 13-րդ և 14-րդ հոդվածների դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի վարչական տարածքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանել՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝			
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝			
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝			
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հայկական համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ37-Ն որոշման

Տեղական տուրքերի դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

1) հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) սույն կետի առաջին ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

ա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

7. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երկու հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհիգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տասնհիգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ քսաներկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վաթսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

8. Բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

6) վիճակախաղերի համար՝ հարյուր հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

10.Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ յոթ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասներկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնյոթ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քառասուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

11. Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական՝ ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

3) սոցիալական գովազդի համար՝ զրո Հայաստանի Հանրապետության դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝երեք հարյուր յոթանասունհինգ Հայաստանի Հանրապետության դրամ,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝հարյուր հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ,

12. Համայնքի խորհրդանիշը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների

կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

13.Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ,

16. Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

17. Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

1) կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում՝մեկ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հայկական համայնքի
ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 16-ի
թիվ37-Ն որոշման

Տեղական վճարների դրույքաչափեր

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկական համայնքում (այսուհետ՝ համայնք) սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ:

6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է՝

1) Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական մեկ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ

2) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական և արտադրական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան մինչև Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

ե) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

զ) շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափով.

է) շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն հավելվածի 7.2-րդ կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափով:

3) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ:

4) Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

5) Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հավելվածի 7.2-րդ կետի «ա»-ից «ե» ենթակետերով սահմանված դրույքաչափերի

հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝

ա) ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ

բ) ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին կամ «**Աղբահանության և սանիտարական մաքրման մասին**» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում

8. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

9. Կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո Հայաստանի Հանրապետության դրամ. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10. Ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ ---. բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11. Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ ----, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12. Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո Հայաստանի Հանրապետության դրամ.

13. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ վճար հինգ հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

14. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ չորս հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

16. Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ զրո Հայաստանի Հանրապետության դրամ.

17. Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական տուրքը սահմանվում է.

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ մեկ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ,

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ մեկ հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

4) մեկ ամսվա համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամ,

18. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ ութ հարյուր Հայաստանի Հանրապետության դրամ փոխհատուցման վճար:

19. Համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ ամսական քսան հազար Հայաստանի Հանրապետության դրամ փոխհատուցման գումարի չափով :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 38

«16» դեկտեմբերի 2019թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ղեկավարի 2020 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 47.63 %-ի չափով՝ 315000 (երեք հարյուր տասնհինգ հազար) դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝			
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝			
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝			
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Կ. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 39

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 9 (ինը) :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝			
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝			
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝			
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հայկավանի համայնքի ավագանու 2019 թվականի
Դեկտեմբերի 16-ի թիվ 39 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	175000	55.56	1	175000	175000
2	Աշխատակազմի քարտուղար	1	190000	60.32	1	190000	190000
3	Գլխավոր մասնագետ-ֆինանսիստ	1	176000	55.87	1	176000	176000
4	Առաջատար մասնագետ	1	175000	55.56	1	175000	175000
5	Առաջին կարգի մասնագետ	1	145000	46.03	1	145000	145000
6	Գրադարանավար	1	95000	30.16	1	95000	95000
7	Պահակ	1	89611	28.45	1	89611	89611
8	Հավաքարար	1	89611	28.45	1	89611	89611
9	Ակումբավար	1	89611	28.45	1	89611	89611
Ընդամենը		9	1224833	-	9	1224833	1224833

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն. ՄԽՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 40

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ «ԱԼՎԱՆ ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, 34-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 11 (տասնմեկ) :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի «Ալվան ծաղիկ մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային .կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝			
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝			
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝			
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հայկավանի համայնքի ավագանու 2019թվականի
դեկտեմբերի 16 -ի թիվ 40 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆԻ «ԱԼՎԱՆ ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՅՑԱԿԸ
ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Սահմանված դրույքը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Ընդամենը դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)
1	Տնօրեն	1	1	145000	145000	46.03
2	Դաստիարակ	2	1	110000	220000	34.92
3	Դաստիարակի օգնական	2	1	92618	185236	29.40
4	Երաժշտական ղեկավար	1	0.5	100000	50000	31.75
5	Բուժքույր	1	0.5	100000	50000	31.75
6	Խոհարար	1	1	100000	100000	31.75
7	Հաշվապահ	1	0.5	140000	70000	44.44
8	Բակապահ	1	1	89611	89611	28.45
9	Օժանդակ բանվոր	1	1	92618	92618	29.40
Ընդամենը		11	9.5	1172465	1002465	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԽՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 41-Ն

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավանի համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի 2020 թվականի բյուջեն՝համաձայն հավելվածի :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ ՝

Կողմ՝ 4 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Հայկավանի համայնքի ավագանու 2019թվականի
Դեկտեմբերի 16-ի թիվ 41-Ն որոշման

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

№	Եկամտատեսակներ	Ընդամենը (հազար դրամ)	Վարչական մաս (հազար դրամ)	Ֆոնդային մաս (հազար դրամ)
1.	Հարկեր և տուրքեր ,որից	9534.1	9534.1	0
1)	Գույքային հարկեր անշարժ գույքից,այդ թվում	5727.4	5727.4	0
ա.	գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար	1.4	1.4	0
բ.	հողի հարկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի համար	5726.3	5726.3	0
2)	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	3756.4	3756.4	0
3)	Տեղական տուրքեր	50.0	50.0	0
2.	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա	24335.8	24335.8	0
3.	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	1451.4	1451.4	0
4.	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	40.0	40.0	0
5.	Տեղական վճարներ	1200.0	1200.0	0
6.	Աղբահանության վճարներ	600.0	600.0	0
7.	Ընդամենը եկամուտներ	37161.4	37161.4	0

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

№	Ծախսերի տեսակներ	Ընդամենը (հազար դրամ)	Վարչական մաս (հազար դրամ)	Ֆոնդային մաս (հազար դրամ)
1.	Աշխատանքի վարձատրություն,որից	20018.0	20018.0	0
1)	աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	18478.0	18478.0	0
2)	պարգևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	1540.0	1540.0	0
2.	Էներգետիկ ծառայություններ	2450.0	2450.0	0
3.	Կոմունալ ծառայություններ	800.0	800.0	0
4.	Կապի ծառայություններ	260.0	260.0	0
5.	Ապահովագրական ծախսեր	30.0	30.0	0
6.	Համակարգչային ծառայություններ	120.0	120.0	0
7.	Տեղեկատվական ծառայություններ	40.0	40.0	0
8.	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	350.0	350.0	0
9.	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	800.0	800.0	0
10.	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	350.0	350.0	0
11.	Գրասենյակային նյութեր	120.0	120.0	0
12.	Տրանսպորտային նյութեր	400.0	400.0	0
13.	Հատուկ նպատակային այլ նյութեր	700.0	700.0	0
14.	Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	8000.0	8000.0	0

15.	Ընթացիկ դրամաշնորհներ	0	0	0
16.	Սոցիալական օգնություն	600.0	600.0	0
17.	Պահուստային միջոցներ	2123.4	2123.4	0
18.	Ընդամենը ծախսեր	37161.4	37161.4	0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ՄԽՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնք

ՈՐՈՇՈՒՄ N 42

«16» դեկտեմբերի 2019 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՄԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 5-ի թիվ 6-Ն որոշմամբ հաստատված կարգի 16-րդ կետը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի ավագանին **որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի 2019 թվականի բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայկավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչ Հովհաննես Արամի Գասպարյանին տրամադրել միանվագ դրամական օգնություն՝ 30000 (երեսուն հազար) դրամ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝ 4	Դեմ՝ 0	Ձեռնպահ՝ 0
ՍԵՎԱԿ ԱՃԵՄՅԱՆ՝	----------	----------	----------
ՍՏԵՓԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝	----------	----------	----------
ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀԻՆՅԱՆ՝	----------	----------	----------
ԳԱՐԻԿ ՈՒԳՈՒՄՅԱՆ՝	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ՄԽՈՅԱՆ

«16» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Հայկավան